

## ՊԱՏՄԱԿԱՆ

### ՀՆՆԵՕՍԵԿԵՆ ՏՆՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՂԱՏՈՅ.

( Շ-Բ-Ն-Ի-Բ-Ի-Ն, Ա-Բ-Բ-Բ Բ. Ժ. )

#### ՅՕԳՈՒԱԾ Գ.

ՂԱՆՔ ՀԱՂԱՏԱՅ ԱԻԱԳ ՍՈՒՐԲ ՆՇԱՆԻ  
ԿԱՄ

#### ԿԱԹՈՒՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ

Այս փառահեղ և հրաշալի մենաստան գրեթէ՝ է մի ի հոյակապ շինուածոյ մեծին Հայաստանի, որ ընդդէմ կացեալ հարիւրաւոր ամօք ահագին շփոթութեանց և տարեալ բազմաանոց փոփոխութեանց ժամանակին մինչև ցայսօր կայ ի շինութեան, և բարձրարարաւ քարոզէ զքաջ ճարտարապետութիւն մերազանց և զջերմեռանդն սէր նոցա առ քրիստոնէական սուրբ հաւատս, որք յանուն Ամենաբարձրելոյն Աստուծոյ կառուցեալ են զայս գեղեցկաշէն մենաստան:

Ի մէջ ընդարձակ բարձրահայեաց հովիտին յարեւելեան կողմն կառուցեալ կայ վանքն Հաղբատայ Սուրբ Նշանի. Կաթուղիկէ կոչեցեալ եկեղեցին է ի միջակիտի անդ ընդարձակ և հոյակապ համակ ի վիմատաշ քարանց: Արտաքին երևոյթ շինուածոյ վանացս է սքանչելի ճարտարապետութեամբ յաղնիւ որձատաշ քարանց գմբէթազարդ երկնանման հրաշալի կաթուղիկէիւ. մինչև ամենայն տեսանողք կրթին ի զարմանս. տեսեալ զսքանչելի մեծագործութիւնս նախնեաց մերոց ի դարս ժամանակաց, յորում տակաւին ճարտարապետութիւնն չէր անկեալ ընդ նուրբ կանոնօք արուեստի: Երկոքին կամարակապ սիւնազարդ դրունք սորա ի հիւսիս և յարեւմուտս՝ են շինուածք գեղեցկայարմար. մինն քան զմիւսն գերազանց ընդարձակութեամբ և փառաւորութեամբ: Ի մտանելն ընդ ճարտարաշէն դուռն արեւմտից ի ներքս, յեկեղեցին՝ երեւի ներքին շինուած եկեղեցւոյն հրաշալի, կառուցեալ առանց սեանց վաթսուռն և վեց կանգնաչափ բարձրութեամբ. երկայնութիւն որոյ է քսան կանգուն. \*) նոյնպէս և լայնութիւնն.

(\*) Կանգուն ասելով իմա արշին Ռուսաց:



բարձրութիւն աւագ բեմին է երկու կանգնաչափ. ունելով երկուստեք կամար ի ձև ծիածանի, շուրջ զօրով ի վեր, ի ներքնածածկս աւագ սեղանոյն գեղեցիկ իմն նկարեալ է հսկայաձև պատկեր Ամենակարողին Աստուծոյ, ունելով ի միում ձեռին զերկրագունդ. իսկ ի միւսումն զխաչաձև գայիսոն վարչութեան նորայայնպէս ուղղակի յօրինեալ՝ մինչ Տէրն տերանց ի վերուստ ի վայր քաղցր ակամբ ակնարկէ ի նուէրս պատարագին անմահ Գառլին Աստուծոյ, որ ի վերայ սեղանոյ. կարկառելով զհզօր օջ իւր. Խտորոտս այս գեղեցկանկար պատկերի մակագրեալ է Հայերէն խոշոր տառիւք այսպէս « Արարիչ երկնի և երկրի . . . ընկալ . . . ի հաճոյս » . ի վերայ աւագ սեղանոյն յարեւելս հանգէպ աչաց պատարագիչ քահանայի բազմեցուցեալ կայ հսկայաձև պատկեր սրբոյ Երրորդութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, թառցեալ վերուստ ի վայր:

Հոյակապ շինուած եկեղեցւոյն կառուցեալ է ի վերայ չորից ճարտարաշէն աղեղնաձև կամարաց, ունելով ի չորից կողմանց զմի մի շրջանակաւոր լուսամուտս, ի հարաւուկողմն բացեալ են ի նորումն լուսամուտ ի չափ կատարելահասակ մարդոյ: Պահարանն որքազան զգեստուց և անօթից եկեղեցւոյն զետեղեալ է յորմն հարաւոյ ի ներքուստ տարածեալ ցտորոտս կաթուղիկէին: Եկեղեցին ունի ի միջի իւրում՝ զեօթն խորանս պատարագի, յորոց չորքն են յօջ և յահեակ առ մակի զբան եկեղեցւոյն, երկուքն ի հիւսիս՝ կրկին խորանօք՝ ուղղեցելովք յարեւելս և երկուքն ի հարաւ նմին նման: Ի վերայ կրկնակի երկուց խորանացս՝ ասեն կառուցեալ կայր ի հնումն փայտաշէն վերնատուն: Բաց ի վերայիշեալ չորից խորանացն յօջ և յահեակ մեծի սեղանոյն են երկու փոքրիկ խորանք կամ զգեստատունք, յորս նոյնպէս են մի մի սեղանք պատարագի, ի հարաւային խորանի՝ որոյ դուռն ելանէ ի բիմն աւագ սեղանոյն, սահսլանի լաստուած ընկալ Սուրբ Նշանն հրաշագործ:

Ուրախ սրտիւ հայեցայ ի ճակատ արեւելեան որմոյն Կաթուղիկէ մեծի տաճարին արտաքուստ քանդակեալ ի վերայ միակուսը խորափոր քարի, ի պատկերս սիրելի թագաւորաց մերոց Ամբատայ և Գուրգենայ՝ որդւոյն Աշոտոյ Ողորմածի ի ձև կատարելահասակ մարդոյ՝ թագաւորական ճոխ զգեստիւք. ի գլուխ Ամբատայ արքայի եղեալ է սրածայր թագ չորեքփեղկեան եզերքն զար-



դարեալ ակամբք պատուականօք իսկ գլուխ Գուրգենայ պատա-  
տեալ է ապարօշ աղնիւ (շալ) պատուեալ Տիգրանեան շքանշան  
վարսակալաւ: Չգետտ թագաւորացս է լայնաձեւ երկայն վերարկու,  
տարածեալ ի թիկանց մինչեւ ցկոճեղս իւրեանց ըստ արեւելեան  
տարագուց: Թագաւորքն պերճացեալք զինուորական զգեստիւք,  
արքայական ականակապ թագիւք, փառաւոր ալեօք մորուաց, դէմ  
առ դէմ կայեալ հանգէպ միմեանց ունին ի ձեռս իւրեանց զձեւ  
և զգաղափար շինուածոց մեծի տաճարին ի նշան նուիրանաց Ա-  
մենակարողին Աստուծոյ: Վասն էր այս քանդակագործ նկարք  
պատկերաց: Հին սովորութիւն էր Հայաստանեայց, ի վերայ երեւե-  
լի շինուածոց կառուցանել զարձան յաւերժական յիշատակի ա-  
կանաւոր անձանց ի նշան մեծագործութեանց նոցա: Յարգ ևս  
հայեցողն ի քանդակագործութիւնս սոյն պատկերաց պատկառանս  
կրէ ի վիճ հայկական ծանր հայեցուածոց թագաւորաց: Թէպէտ  
ի ստորոտս այսր բարձրաքանդակ ճարտարագործ պատկերացս ե-  
րեւի մակագրութիւն ինչ, բայց անվերժանելի, ըստ որում եղեալ  
է փակագիր ծածկագրութիւն, զոր ընթեռնուել յիրաւի չառ ջա-  
նացի, սակայն չեղեւ հնար, որովհետեւ ըստ մեծի մասին եղծեալ  
և մոշեալ էր:

Թագաւորութիւն Հայոց թէպէտ էր միապետական կառավա-  
րութիւն հաստատուէն և արդարագատ, բայց բաժանեալ կայր ի  
բազմիշխանութիւնս առանց որոշեալ ունելոյ զսահմանս նա-  
հանգայ. կառավարիչք որոց — նախարարք ցանկալով ունիլ  
զանկախութիւն, օգնութիւնս ինդրեալ յայլ և այլ գուա-  
ճան տէրութեանց բազմիցս յորուցանէին զմեծ խռովութիւնս  
ի Հայաստան: Բագրատունի աշխարհաշէն թագաւորք Հայոց ցու-  
ցանէն մեղ զարմանալի օրինակ հաստատելոյ զանկախ իշխանու-  
թիւն Հայոց, հանապաղ մղեալ զմարտ պատերազմի ընդ զօրաց  
դրացի թագաւորաց Պարսից, Յունաց, Հագարացւոց և այլ մահ-  
մետական բռնակալաց, ընդարձակեցին զիշխանութիւն իւրեանց,  
և եղեն վերստին պատճառ շինութեանց և բարութեանց բնակչաց  
Հայաստանի: Ի վերջ Թ. գարուն թագաւորեաց Աշոտ Գ. էրէց որ-  
դի Ամբաստայ արքայի ի տեղի հօր իւրոյ և զամս հինգ մեծամեծ  
քաջագործութեամբ վանեալ զթշնամիս ազատեաց զՀայաստան ի  
բռնաւորաց, համալեաց զամենայն ազատ իշխանս ջանալ վասն խա-  
ղալութեան և շինութեան աշխարհին մերոյ: Ի նմին փամանակի



ամենայն նախարարք մեր միաբանեալ ժողովեցան յԱնի. ուր ետուն բերել զԱնանիայ կաթողիկոս, որ էօծ զԱշոտ թագաւոր յամի տեառն 961: Այնուհետեւ շինեցան յԱնի արքայանիստ մայրաքաղաքին Բագրատունի արքայից Հայոց հոյակապ պալատք, արքունի և այլ մեծակառույց շինուածք. իսկ ի սահմանս Նիրակ գաւառի հռչակաւոր վանօրայք և եկեղեցիք:

Խաղաղութիւնն է պատճառ հայրենի և աստուածահաճոյ շինուածոց: Աւստի ի նմին խաղաղ ժամանակի Խոսրովանոյշ բարեպաշտուհի զշխոյն Աշոտայ Աղորմածի ասեն պատմաբանք մեր շինեաց զհռչակաւոր մեծակառույց վանս Հաղբատայ: Բազում տարածայնութիւնս տեսանեմք ի գիրս պատմաբանից մերոյ վան շինութեան վանացս: Ասողիկ, Վարդան, Մատթէոս և Մինաս Համթեցի միաձայն բանիւք զշինութիւն սորա ընծայեն Խոսրովանոյշ թագուհւոյ, գնելով Մինասայ Համթեցոյ թուղթ 33. Նաև թղթուական շինութեան յասելն « թագուհի սորա ( Աշոտոյ ) շինեաց զՀաղբատ և զՍանահին զհռչակաւոր վանօրայս. ի թվին ԳՃԺ. ( յամին 961 ). իսկ ընդարձակօղն Սամուէլի յայլում թուականի յոյլ և այլ ամս գնէ զշինութիւն երկոցունց վանօրէիցս յասելն իւր. « ի ՆԺԶ. թվին Հայոց ( 967 ) շինեցաւ Հաղբատ, և Սանահին տան ամօք յառաջ քան զՀաղբատ ի Խոսրովանոյշ թագուհւոյն: Կիրակոս Պատմագիր այլ օղգ գրէ զհիմնարկութենէ սորա իրր ի ԺԱ. դարուն. « Իւրև ետես Կիրիկէ արքայ Բագրատունեաց՝ որդի Դաւթի որդւոյ Դերենկան, որ հիմնարկեաց զհռչակաւոր ուխտըն Հաղբատայ. . . : Շիրթեալ երևի բան Կիրակոսի զի ի ԺԱ. դարուն վանքն Հաղբատայ պանծայր շքեղութեամբ բարեկարգութեամբք և վառօք. ապա զիտրգ մարթէ զհիմնարկութիւն նորա ընծայել Կիրիկէի Բագրատունւոյ արքային Աղուանից. այլ մարթէ տսել, թէ ի Հաղբատ են դանաղան մատուռնք, յորոց զմին թերևս շինեաց այս Կիրիկէ. վասն որոյ Կիրակոս համարի զայն շինութիւն կամ հիմնարկութիւն վանիցն:

Այլ ըստ արդարակորով վերոյիշեալ պատմաբանից մերոց կարեմք հաւատարեալ տսել, թէ Խոսրովանոյշ թագուհի՝ կին Աշոտայ Աղորմածի աստուածային յուսով վառեալ ի սէր բարեպաշտութեան հիմնարկեալ ընդարձակ և հաստակառոյց շինուածով կանգնեաց միմիայն զոյն կաթողիկէ եկեղեցի ի թուին Հայոց ՆԺԶ. յամին 967. որպէս և Վարդան զշինութիւն Հաղբատայ՝ համարե-



լով ընդհանուր նորոգութիւն կամ վերստին հիմնարկութիւն ի Խոսրովանոյ թագուհւոյ, պատմէ նախ՝ զշինութիւն կրօնաւորաց փախուցելոց ի Հռոմոց խկիղքն Ժ. դարուն յաւուրս Աբասոյ արքային իբր ի 934-ն, որք շինեցին վաճառ ի Սանահին և ապա զշինութիւն Հաղբատայ խմա կաթուղիկէ եկեղեցւոյն ի ՆԺԶ. (967) ձեռամբ Խոսրովանոյ թագուհւոյն, Իսկ միւս մեծ և փոքր եկեղեցիք և զանազան մատուռնք՝ որք կան ի Հաղբատ կից կաթուղիկէ տաճարիս յայլում թուականի յայլ և այլ ամս յայլոց բարեպաշտ անձանց են կառուցեալք. զորոց ի տեղւոջ իւրեանց կարգաւ գրեցուք:

Գիտել արժան է և զայս, զի զշինութենէ տաճարիս այլ ազգերի ի վերայ հիւսիսային որմոյ ի վեր քան զլուսամուտն ի միում արձանի թէ « ի թուին Հայոց ՆԽ. (991) ես Սիմէօն հայր և Տիրանուն երէց շինեցաք զեկեղեցիս փրկութեան Սմբատայ և Գուրգենայ . . սակայն յայտնի է ամենեցուն՝ թէ ըստ վկայութեան պատմաբանից մերոց զայս մենաստան հիմնարկեալ շինեաց Խոսրովանոյ թագուհի Հայոց վասն փրկութեան և արեւշատութեան որդւոց իւրոց Սմբատայ և Գուրգենայ և զպատկերս նոցա փորագրեալ շքեղ քանդակագործութեամբ ի միակտուր քարի կացոյց ի ճակատ արեւելեան որմոյն, բայց նոքա գրեն՝ թէ շինեցաք. ուստի մարթէ կարծել, թէ նոքա ոչ էին խկապէս շինողք, այլ վերակացուք կարգեալք ի թագուհւոյն ի վերայ շինութեան մենաստանիս, որք և յետ վախճանի թագուհւոյն աւատածեալութեամբ Սմբատայ և Գուրգենայ արքայից մերոց բոլորովին աւարտեցին 991 թ. զշինութիւն տաճարիս:

#### ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ.

Ի մէջ մեծի տաճարիս առ դրամբն հիւսիսոյ ի վերայ աջակողմեան որմոյն յարեւելս գրեալ է այսպէս: « Ի թուին ՆԶ. (1021) ես Ապղզարիք \*) որդի Գրիգորոյ ետու զԱրծուկոյնն ի Հաղբատ. գոնձագին արարեալ վասն Յովանիսի արեւշատութեան և ինձ մեղացս թողութեան, և պարտական են յամենայն տարի երկու քառասունք առնել ինձ: Արգ եթէ որ զիմ ուխտս խափանել ջանայ, նդուեալ լիցի յամենակալ բերանէն Աստուծոյ և մի տեսցէ փառաց զՈրդին Աստուծոյ . »:

(\*) Այս Ապղզարիք է եղբայր Ահհրամայ Պաշաւունչոյ:



## Ի ներքոյ տորա :

• Ի հոտ անուշութեան եղբարս Գրիգորայ հինգ պատարագ յա մենայն տորի անխափան մատուցանել յաւուրս սրբոյն Գէորգայ և որ խափանէ մեր մեղացն տէր է ։

Յահեակ կողմն մեծի եկեղեցւոյն :

• Ի թուին Հայոց ՈՂԳ. ( 1245 ) շնորհին Աստուծոյ ու Դատ թի և Կիւրիկէի՝ ես հայր Յովհաննէս ետ(ու) զՋովհանն սուրբ Նշանիւս վասն արեւշատութեան թագաւորաց սոցա և մեղացս թողութեան գրեցին (ինձ) ժամ զՅարկազարդին. որչափ մեք կենդանի եմք մեր ծնողացն աւնեն և յետ վախճանի իմ՝ ինձ : Հայր Յովհաննէս և եղբարքս գրեցաք Վահրամայ ժամ անխափան մինչ ի զսլուսան Աստուծոյ. եթէ որ այս գրոյ հախաւակ կայ կամ պակասել ջանայ և որ զայս գիրս խափանէ, նպուեալ է\* ) ։

## ԱՐԵՒԱՅԻՆ ԺԱՄԱՅՈՅՑ.

Վասն գիտելոյ միտրան կրօնաւոր եղբարց զժամս աւուրց առ ի կատարել զպաշտօնեբութիւնս՝ փորագրեալ կայ Հայերէն Սեորպեան տառիւք ներկեալ կարմիր գեղով ի վերայ հարաւային մեծի տաճարին և զանգակատան արեգակնային ժամացոյց. որով ճշտիւ մարթ է չափել զժամս և զքառորդս աւուրց ըստ ընթացից արեգական : Ձեւ արեւային ժամացուցիս է կիսաբոլոր աղեղնաձև գիծ. փորագրեալ ի վերայ տրճանի՝ կայուցելոյ հանգէպ արեգական, բաժանեալ իւրաքանչիւր 12 ժամս առանձին գծիւք. իսկ զքառորդս կտորակ գծիւք. ի վերուստ ժամացոյց արձանին ուղղակի ցցեալ կայ սլաք ( ճիւղոտ ) որոյ ստուերաւ ցուցանին ժամք և յաւորդք աւուրն ի ծագմանէ պոյծառ արեւուն մինչև ցմուտս նորա :

Ամենահին է գիւտ այսր ժամաչափի, որ ցուցանէ զորքանութիւն ժամանակի առանց երկրայութեան և կոչի արեգակնային կամ իսկապէս ասել արեւային ժամացոյց : Դործածութիւն առաջին ա-

(\*) Ի մէջ մեծի կաթուղիկէ եկեղեցւոյն գոն յոլով արձանագրութիւնք ի վերայ որմոց. բայց յապայն ծածկեալ են կրազանդ ծեփով վասն ներկելոյ զմէջ տաճարին և նկարելոյ ի վերայ ծեփոյն զանօրինական պատկերս. այժմ ի տեղիս տեղիս կիսաչափ երեւին արձանագրութիւնքն. անհնարին է ընթեռնուլ զայնս, մինչև ո՛չ անկցի կրազանդ ծեփն բոլորովին :



բեային ժամացույցի ի Հայս թուի ի ժամանակս Արշակունեան Արտաշիսի Բ. արքայի մերոյ ձեռամբ Վահուճի քրմապետաց, որք ըստ աւուր պաշտածի ժամաչափութեամբն պաշտօն տանէին պէսպէս կռոց պաշտելոց ի Հայաստան մինչև ցծագումն Քրիստոսնէս թեան: Որպէս գրէ Մովսէս Խորենացի գիրք Բ. Գլ. ԾԹ. «այսպիսի գիտութեանց կամ անփոյթ արարեալք, և կամ ոչ հասեալ, զաւթաթուց առեմ և զամսոց և զտարերոց բոլորմանց. քանզի ոչ այսպիսի ինչ ճանաչիւր առ նոսա: Եւ այս ամենայն յօրինի յաւարս Արտաշիսի»: 1

Ասին թէ նախ՝ Անուքսիմանդր հնարեաց զայս ժամաչափ ի վեցերորդ դարուն նախ քան զԾնուդն Քրիստոսի. թէպէտ Յոյնք բազում հնարիք ջանացին սեպհականել ինքեանց զայս արժանայիշատակ գիւտ: Սակայն առաւել հաւանական է, թէ նախ Եգիպտոսցիք հնարեցին զայս աստղաբաշխական հետաքննութեամբ իւրեանց: Իսրայէլացիք ևս 700 ամօք նախ քան զՔրիստոս, ծանօթ էին արեգակնային ժամացուցին Աքազու և յայտ իսկ է, թէ նոքա առեալ էին յեգիպտոսէ ի գործածութիւն շափելոյ զժամս աւուրց: 1

(1) Եւրոպայի 17-րդ դար:

Ռուստամ Բէկ Երզնկեանց:

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Բաղճարդիւն Խճադրութեան Արարատի ամառանոց:

Յուսալով՝ որ Արարատ լեռան հովիտների և ստորոտների նորանոր գիւտոց արտադրութեամբ, խօսքս բեկեռած արձանագրութեանց մասին է, (չեմ ասում՝ զանազան հանքային հարստութեանց համար, որք գեո ժամանակի և ընկերական ձեռնարկութեանց պէտք ունին,) կարող եմ զարգարել Արարատ ամառանոցի էջերը՝ Արարատեան թագաւորութեան երբեմն փայլած փառքը արտայայտելու ցանկութեամբ (Երեմիա մարգարէ՝ ԾԱ. 28), ի լոյս ածելով երջանիկ նախնեաց մեզ աւանդած հոգիներից նշխարհներն — բեկեռած արձանագրութիւնքն Արարատեան նահանգի, որ բարեբաղտաբար իրրե թարգման նոցա ժամանակի զգացմանց և սրտից լինիմ ես. սպագրութեամբ ի լուր աշխարհի հրատարակելով զայնս. Աւ այս իսկ պատճառաւ ահա գրութեանս հետ յանձնեմ խմբագրութեանդ ի հրատարակութիւն Թ. և Ժրդ արձանագրութիւնքն Արմաւրայ, և Բրդ արձանագրութիւնքն Յօլակերտի:

Արմաւրայ Թ. արձանագիրը շրջապատուած է դօտւոյ նման՝ արձանաքարի